ՀԱՍՑԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւնք ետ չեն ղրկուիր։ Յօդուածներու պատշաճ դատուածները միայն կը հրատարակուին։

Բաժնեգնի կամ ծանուցման փոխարէն ամէն երկրի նամակադրոշմները (փուլ) կ'ընդունուին հարիւրին 20 պակաս հաշուելով։

Ծանուցումներ կ'ընդունուին գիւրամատչելի գիներով։

ΕΦΗΜΕΡΙΣ Η ΕΝΩΣΙΣ

ՄԻՈՒԹԻՒՆ

(ՕՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ)

ԲԱԺՆԵԳԻՆ
Տարեկան արծաթ ֆրանք 4
Վեցամսեան » » 2
Հայաշատ քաղաքներու մէջ ձեռքէ կը ծախուի հատը 10 սանթիմ։
Փոստի ծախքը խմբագրութեան կը պատկանի։
Բաժնեգինները կանխիկ վճարելի են։
Թերթ ուղղներու բաժնեգինը չը պարունակող նամակները նկատի չեն առնուիր։
«Միութիւն»ը և ոչ մի տեղ ծրի չը ղրկուիր։

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ ԿԻՍԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Գ. ՏԱՐԻ ԱԹԷՆՔ 1/13 ՓԵՏՐՈՒԱՐ 1899 ԹԻՒ 25

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Քաղաքական հանգամանքներու աննպաստ հետևանքով «Միութիւն»ը երկիցս դադարման դատապարտուեցաւ, այժմ ամէն ինչ կարգադրուած ըլլալով՝ կը խոստանանք յետ այսու կանոնաւորապէս շարունակել հրատարակութիւնը։

Ըստ մեր նոր կարգադրութեան «Միութիւն»ը ներկայ ծաւալով պիտի հրատարակուի 15 օրը մի անգամ, տարեկան 4, վեցամսեայ 2 ֆր. բաժնեգնով. հայաշատ քաղաքներու մէջ՝ մեր գործակատարներու միջոցաւ հատը 10 սանթիմի պիտի ծախուի, պայմաններու մանրամասնութիւնը տեսնել լրագրոյս ճակատը։

Մեր պատ. աշխատակիցներէն մին իւր աշակերտներէն միոյն ներշնչելով միութեան օգուտն ու ազգաշինութիւնը, ասպարէզ տուած է իւր ծագովին վերաթեւել միութեան մթնոլորտին մէջ. ուրկէ հետևեալ կերպով կը լսէք նորա ճառողիւնը, երանի՜ էր թէ ամէն կարող և զգայուն սիրտ նոր երիտասարդութենէն պատրաստէր միութեան սիրահար դեռատի հայեր. որոնցմով միայն այսօր վաղը, ու թերևս օր մը պիտի անձնաւորի հայկական ինքնօրինութիւնը։

* * *

ՕՏԱՐԻՆ ԳԱՐՈՒՆԸ

Ահա գեղեցիկ գարունը եկաւ,
Ու երկրիք կարծես նոր կեանք մը տուաւ.
Մեղմիկ զեփիւռը կը շնչէ խաղաղ,
Որ կ'ուրախցնէ սրտերը նուազ.
Բայց ի՞նչ փոյթ ունի գարուն չէ հայու
Զատար հայ սրտից հոգի սիրարկու։

Մայիսը աղէ՛ր ցարդարեց ծաղկով,
Դաշտ ու պարտէզներ լեցուց բուրումով,
Բայց ի՞նչ փոյթ ունի մայիս չէ հայու,
Զատար ֆայ սրտից հոգի սիրարկու։

Վէճիտ աղբիւրներ հոսին կարկաչով,
Դաշտին մէջ ակոս գործեն հազարով.
Բայց ի՞նչ փոյթ ունի գարուն չէ հայու
Զատար հայ սրտից հոգի սիրարկու։

Դեռ այշալոյսը երբ նոր կը բացուի,
Թռչնոց երգերով օդը կը լեցուի.
Բայց նայն արշալոյս չէ տրուած հայու
Այն չտար սրտից հոգի սիրարկու։

Թէ երբոր տեսնեմ միութեան գարուն
Միութեան զեփիւռ կը շնչէ հայուն.
Մայիս միութեան սուրբ ծոցէն ծնած,
Երբ նոր արշալոյս բերէ մեր կենաց.
Յայնժամ խնդագին գոչեմ թէ հայու
Միութիւն հոգի կուտայ սիրարկու։

Մոծակ

1899
ՆՈՐ ՏԱՐԻՈՑ ԱՌԹԻՒ

«Ո՛չ մի ազգ կամ մարդ՝ ձեռներ իւր սխալները խոստովանելով, բայց կը մեռնի, այդ սխալները պնդելով ու կրկսելով։»

Մարդկային հասուն բանավարութիւնը և կենաց տևողական գործնականութիւնը՝ տեղի կուտան մի իմաստութեան, որ փորձառութիւն կը կոչուի, որը ո՛րչափ ընդունուի, այնչափ օգտակար կը լինի. բայց ո՞ւմ. — անոր՝ որ իւր գործառնութեան նպատակը բարի վախճան մը ընել որոշած է. անոր՝ որ իւր գործերը կը վարէ ազնիւ, ուղղամիտ նպատակի մը հետ, անվեհեր, անշահասէր և բարոյական վսեմ ձգտումով. զոհ տալով երբեմն հասարակաց օգտին իւր անձնական, եսական քննադատելի համոզումն, իսկ ստէպ զոհելով՝ անձին սահմանափակ շահերն ու փառքը. եթէ երբէք փափաքի անկեղծօրէն ծառայել հանրութեան օգտին. ի՛նչ տեսակէտով ալ լինի փափաքուած ծառայութիւնը. և առանց այս սահմանական որակութեանց՝ տակն տեսակ գործնական եղանակ՝ քննութեան, քննադատութեան, կասկածանքի և մինչև իսկ հակառակ հայեցակէտով գործուած լինելու դատապարտութեան տակ կ'իյնայ։ Ա՛ռ այս, այս է տրամաբանական ճշմարտութիւնը.

Ազգ. Եթէ սոյն ուղղութեամբ, կամ մի այլ եղանակաւ քննութեան առնուի մեր ազգ. գործիչներու տարբեր եղանակաւ, տարբեր ուղղութեամբ և տարբեր միջոցներով ցարդ ունեցած գործունէութիւնը, և եթէ երբէք այլ և այլ կուսակցական գործիչներու մէկ մէկու դէմ հրապարակաւ գրած, խօսած և գործած հակընդդիմութեանց ալ հաւատալու դիւրահաւանութիւնն ունենանք, մեր անհատական, պաշտօնական ու մինչև իսկ ընդհանրական քննութիւնները յաւիտենական պաբբերութեան մէջ պիտի մնան խպառ, և մենք որչափ ներողամիտ ու հաշտարար լինինք չպիտի յաջողինք հասնիլ որ և իցէ եզրակացութեան. որպէս նոքա ալ չպիտի կարողանան այս կերպով բոլորովին նպատակայարմար կերպով գործել... Կուսակցական գործառնութեանց ցարդ կատարուածներն քննադատել. մեղ դժուար է ինչպէս և անօգուտ. — մեր պարտէզը կենդանի մը մտեր բոյսերը կուտէ, կը կոխոտէ և կ'ոչնչացնէ. — մենք փոխանակ ժեղով զումարելու, խորհուրդ դնելու թէ այդ կենդանին արդեօք ո՞ր կողմէն մտեր է. գիտնալու մեր խելքը փայլեցնելու սնոտի մտածութեամբ, իսկոյն ջանանք աւերող կենդանին դուրս վանել. ու պարտէզնիս աւերածութենէ փրկել. ո՛չ մի ճարտասանութիւն և սուր ու սահուն գրիչ, ո՛չ մի կեղծաւոր համեստութիւն, ո՛չ մի պոռոտախօսութիւն չեն դարմաներ մեր ցաւը. վասնզի մեր ցաւը զրական կամ գիտական չէ, պատշաճից ձևակերպութեան ձգտումը չէ և ո՛չ ալ խրոխտ սպառնալիքով գլուխ ելնելու տղայական խաղ. կենաց և մահու օրհասական պայքարի մը մէջ ենք. գոյութեան դեմ ընդդիմանալ մղենք խիստ քիչերու ձեռքով, ու այդ խիստ քիչերէն լաւագոյններն օր քան զօր կը պակսին, կը նուազին անձնազոհութեամբ. որոց վրայ երեմիականներ կը կարդանք առանց նոցա յաջորդներ կարենալու մատակարարել, պատրաստել և դարձեալ այդ քիչերէն ոմանք զիրար պառակտելու, երկպառակելու, անուանարկելու և գոյացեալ ոյժն ալ չեղոքացնել ուզը նկրտին. մինչ անդին ազգին մեծագոյն մասն, իսպառ զրկուած իւր տնտեսական, քաղաքական և բարոյական կարողութենէն, իւր քայլամոլոր ոտից դէմ մի խարխուլ կռուան չգտներ և հալածանաց փոթորկին մէջ. յուսահատութեան ծովուն մէջ իւր ձեռները թունաւոր օձին իսկ կը կարկառէ ու դեռ կը յուսայ... ապրիլ, քարշ գալ սողունի նման. կոխոտող պիղծ ոտքերու տակ. ու այս ամենը կը տեսնենք. կը տեսնեն և նոքա, որք կոչումն ունենալ կը հաստատեն պաշտպանելու ազգին գոյութեան սպառնացող վտանգն ոչնչացնելու պաշտօնը. և միւս կողմանէ իւրյար և նման մի այլ մարմնոյ գոյութիւնը, գուցէ քան զիւրն օգտակար ոտնակոխ ընել կը խորհին փոխանակ թշնամւոյն։

Ի՞նչ է այս ամենուն պատճառը. — պատասխանն աւելորդ է... մենք միայն յանուն ընդհանուր ազգի կոչումն ընել կը պարտինք մեր գործիչներին, ՄԻԱՆԱԼ. եթէ Ազգը կը սիրեն նոքա. վասնզի «ուր միութիւն հոն է ոյժ։» իսկ եթէ խոհեմութեան կամ փորձառական պատրուակի տակ դարձեալ եսական մոլութեանց ի նպաստ բաժանեալ գործելը նախադասուի կրսենք. սուտ է քէ. խոհեմութիւն և փորձառութիւն ժողովրդեան մեծագոյն մասն պակուլաւ գիտէ ձեղմէ։ «Բաժանեա՛ զի տիրեսցես» ահա մեր արտաքին թշնամւոյն ուղիղ սկզբունքը. բայց դա ներքինին համար մեզ համար (ներքնապէս) սխալ է և կործանիչ ոգեաւորուած բաժանեալ կամ ուրոյն, որոյն գործողութիւնը, եթէ դեռ փափաքեալ միութիւնը որ Ազգին կամքն է, ու փրկութեան անվրիպելի միջոցն է, իրականացնելու գործադրելու անհրաժեշտութիւնը չը ստանայ մեր գործիչներէն. ապագան պիտի պահանջէ իւր անխուսափելի և դառն պատասխանատուութիւնը. և կը կարծենք թէ այդ ապագան բաւական դրաւոր կը լինի իւր իրաւանց ու դատաստանին մէջ...

Դառնակսկիծ շնորհաւորելով մեր բոլոր եղբայրներին 1899 թուականի խորհրդաւոր նոր տարին որ լի է անակնկալ երկունքով, կը մաղթենք մեր բոլոր գործիչներին լուսաւոր միտք, անվեհասէր [illegible] Միութեան յաջող ձեռնարկ. զոր նրա պասէ Ազգը բոլոր իւր անկեղծ զգացումներով իւր գործիչ զաւակներէն, որոց ազնուագոյններն անքուն գիշերներ տան առաջին նշանք. սպասել և յուսալ։

ՇԱՀԷՆ

ԱՐՄԷՆԻԱ. ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ՀԵՏ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

«Արմէնիա» լրագրի 1898 սեպտեմբեր 3 և 10 թիւերուն մէջ Շաւասպ ստորագրութեամբ յօդուածներ մը տեսանք միութեան վերաբերեալ, թեամբ և որովհետև միութիւնը ոչ որ ալ ըլլայ՝ ընտանիքի մը, ընկերութեան մը և հաւաքաբար ազգի մը զօրութիւնն է և զրովհետև ինչպէս այլք, նոյնպէս և ես իմ կարողութեանս չափով «Միութիւն» լրագրին մէջ Շաւասպի նման քանի մը յօդուածներ հրատարակած եմ յեղափոխական միութեան համար. հետևաբար Երգ. Ազգս այս կենսական խնդրոյն նկատմամբ կը տեսնեմ որ Պ. Շաւասպ քննադատութեան ձևի տակ «պաշտպանող» մակդիրով անտրամաբան, անիրաւ և առանց ապացոյցի երկու կուսակցութիւնները՝ այն է Հնչակն ու Դրօշակը կործանելու, անոնց ցարդ գործեցած շատ ու քիչ անձնադիր զոհողութիւնները ուրանալով, երրորդ կոմ չորրորդ յեղափոխական ընկերութիւն մը ստեղծելու և հայ Ազգին մէջ բաժանում դնելու նախատինքն կընէ, հա-

կառակ մեր սկզբան կը պարտաւորէ զմեզ «Արմէնիոյ» յօդուածագրին՝ այն է «Արմէնիոյ» դէմ գրել։

«Արմէնիոյ» դէմ ըսինք, վասնզի երբ թերթ մը յօդուած մը կը հրատարակէ, որուն մէջ միայն իրեն գովեստներ և անկեղծ ազգասէրներու նախատինքներ կը տեղան և խմբագրութեան կողմանէ, ընաւին դիտողութիւններ չեն ըլլար, ըսել է այս ձևին տակ Պ. Շաւասպի ձայնը նոյն իսկ «Արմէնիոյ» ձայնը կրնայ նկատուիլ. ուստի խորհելով որ, առանց Սգաւոր Ֆէրհատութեանս խնայելու և առանց շրջահայեցութեան իմ առ «Արմէնիա» ունեցած բարեկամութիւնս և առ Ազգս ունեցած սրտիս անկեղծութիւնը նկատողութեան առնելու զմեզ ստիպմամբ քննադատութեան ասպարէզը կը հրաւիրէ։

— Եւ ինչ ընելու է

— Կը կանչէ կոր, երթալու է, ուրեմն քիչ մը երթանք, բայց երանի՛ էր թէ երկար ճամբորդութիւն մը չունենայինք։

— Գինովին գինութիւնը որչափ ալ աւելի տևէ, սահմանեալ ժամանակի մը մէջ կ'սթափի, եթէ չ'կրկնուի։

Լսեցէք, Պ. Շաւասպ յիշեալ տասը թուոյն մէջ կ'ըսէ.

«Այսօր հայ մտքերը չահագրգռող և ժողովրդին ամեն խաւերուն մէջ արձագանք գտնող էական խնդիրներէն մին է հայ յեղափոխականներին ընդհ. միութեան հարցը։»

Ըսել է ընդհ. միութեան հարցին ի նպաստ գրելն ու խօսիլ ըստ ինքեան սուրբ է, նուիրական է և պարտաւորիչ, որովհետև Պ. Շաւասպ ինքզինքը միութեան անձնուէր կը յայտարարէ և անկեղծ ազգասիրի դերասան կը հանդիսանայ, հայու արեամբ, հայու արտասուքով և հայու դիակներով չինուած դատերական այս մահաբոյր բեմին ՀԱՅ դերերոնի դերկատարելու քաջութիւնը կունենայ. կը հեռեի ըսել է, ինքն ալ միութենական է և մեր խումբին այն է գաղափարի լուսով և սրտի բոլորանուէր զգացմամբ միութենականութեան կը պատկանի, ուրեմն ըսել է թէ կամ բոլորովին միութեան կամ միութենականութեան յարելու է և առանց ապացոյցի ենթադրական երազներու խաղալիկ ըլլալու չէ, և կամ եթէ միութեան հակառակ է, զանի գովելու չէ. վասնզի շատ ծաղրելի կըլլայ ենթակայի մը վրայ գովեստներ շռայլելէ ետև, նոյն ենթակային վրայ ենթադրաբար պարսաւներ հրատարակել, եթէ այսպէս ենթադրութիւնները ճշմարտութեան պիտի փոխարկենք, կը փափաքէինք որ, մարդարէից դարուն մէջն ըլլայինք և Պ. Շաւասպ իբրեւ մարգարէ խօսէր և մենք լսէինք։։

Ահա այս օրինակ ենթադրութիւններ ասկէ աւելի չեն արժեր։

— Ուր որ գործնական ապացոյց չկայ, հոն խօսելու իրաւունք չկայ։

Ասոր հակառակ եթէ ամեն դրիչ բռնող հրդեհի վաղող խուժանին պէս կուրբաբար այս կամ այն կուսակցութեան ի պաշտպանութիւն բանակուի ասպարէզը նետուի, դժբաղդաբար բաբելոնի աշտարակաշինութիւնը կը յիշեցնէ մեզ, ուր մէկը միւսին խօսքը չհասկցաւ և կորուստէն աւելի բան մը չերևցաւ։

Մնացածն յաջորդ թուով

Գահիրէ ՍԳԱՒՈՐ ՖԱՐՀԱՏ

ՄԱՀԱԳՈՅԺ

Վերջերս յեղափոխութիւնը մի զոհ ևս ունեցաւ յանձին Հայկ Ֆէլէկեանի (Արշակ Դ. Խաժակնեան) Սլէքսանդրօպոլցի երիտասարդին։

Հանգուցեալը հայ-յեղափոխական ասպարիզում բաւական մեծ դեր է կատարել, դլխաւորապէս 1896 թուին, Վասպուրականի է'ն արհաւրալից և տագնապալի ժամանակամիջոցներին զէնքեր և պաշար փոխադրելով Վան Հնչակեան դիւորների համար և ինքն էլ մինչև վերջ հաւատարիմ մնաց Հնչակեան դրօշին (ո՛չ մարտական)։ Նա գրաւոր կերպով էլ բաւական օժանդակել է հայ յեղափոխութեան զարգացմանը. ի միջի այլոց արժէ կարդալ նրա «Հնչակեանութիւնը և Նաղմիանութիւնը» յօդուածը տպագրուած անցեալ տարուոյ «Հնչակի» երկու համարում, Nord ստորագրութեամբ։

Եւ այդ անձը, որ այնպէս ջերմ կերպով պաշտպանում էր յեղափոխութիւնը և կարող էր այսուհետև էլ բաւական օգուտներ բերել այդ սրբազան գործին, յանկարծ զոհ է գընում մի ինչ որ աղայի քմահաճութեանը, Թուրքերի (կաշառուած) ձեռքով սպանուելով Մարաղայից Թաւրիզ տանող ճանապարհի վրայ։

Պարոնը մի ամբողջ տարի, 1897 և 98 ուսումնական տարեշրջանում՝ ուսուցչութեան պաշտօն էր վարում Մարաղայում, ամենայն բարեխղճութեամբ առաջ տանելով իւր գործը, բայց քննութիւնից յետոյ մի անախորժ ընդհարում ունենալով մի աղա հոդաբարձուի հետ ստիպւում է հրաժարուիլ իւր պաշտօնից և հեռանալ քաղաքից։ Աղան իբր թէ բարոյապէս վիրաւորուած նրանից՝ վճռում է վրէժ լուծել պարոնից, ուստի կաշառելով մի քանի Թուրքերի ճանապարհին ըսպանել է տալիս խեղճ երիտասարդին։

Այդպէս խեղճը զոհ է գնում մի ինչոր աղայի քմահաճոյքին առանց ունենալու ո և է պաշտպան։

Այդպէս յեղափոխական արիւնը թափում է ի զուր տեղը... Հանգի՛ստ իւր ոսկորներին....

FARCE

ՄԱՐԱՂԱ Նոյեմբեր 28

ՆԱՄԱՅ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Անցեալ շաբաթ ուշադրութեան արժանի մի դէպք պատահեց մեզ մօտ։

Շաբաթ օրը մեր առաջնորդ հայր Այվատեանը բանադրելով 6 ամսւայ պաշտօնանկութեան և փիլոնը վերցնելով Սալմաստեցի Տէր Մովսէս քահանային զրկեց որոշեալ ժամանակամիջոցում նաև եկեղեցական հասոյթներից հետևեալ յանցանքի համար։

Անցեալներում մի կովկասցի երիտասարդ յեղափոխական Նիկոլ անունով նահատակուած է լինում Վասպուրականի վերջին խռովութիւնների ժամանակ, ուստի երկար միջոց երիտասարդի հայրն էլ երկար ու բարակ հարց ու փորձերից յետոյ մի նամակ էլ գրում է Սալմաստ, որ իրեն տեղեկութիւն տան իւր որդու համար, կամ եթէ նա ինքը ողջ է, այդ նամակը տան, յանձնեն իւր որդուն։ Այդ նամակը յիշեալ Մովսէս քահանայի ձեռքն է անցնում. նամակի մէջ ի միջի այլոց յիշուած է լինում, որ Նիկոլը (իբր թէ այժմ անունը փոխած լինէր Լևոնի) որչափ փող ուզէ, մինչև 5-600 մանէթ, ինքը պատրաստ է ուղարկելու, միայն թէ վերադառնայ տուն, իր ծնողաց գիրկը՝ իր հայրենիքը։ Տէր Մովսէսը այդ նամակը տանում է մի ուրիշ Լևոն անունով երիտասարդի մօտ, թէ արդեօք այդ նամակը նրանը չէ, կամ թէ արդեօք նա է յիշեալ Նիկոլը. երիտասարդը բարեխղճօրէն բացատրում է, որ ինքը չէ և որ այդ Նիկոլը արդէն ըսպանուած է Վանում, յայտնում է նա քահանային։ Վերջինս էլ մտածում է իսկոյն օգուտիլ այդ նամակից, ուստի և ինքը մի կեղծ նամակ պատրաստելով ուղարկում է Նիկոլի հօրը ստորագրելով նոյն իսկ Նիկոլի անուն աղգանունը և յայտնելով իբր թէ ինքը (Նիկոլը) կենդանի է և կարիք ունի 200 մանէթի հայրենիք վերադառնալու համար։

Եւ խեղճ հայրը ստանալով այդ նամակը անձամբ գալիս-գնում է Սալմաստ իւր որդուն գտնելու համար. բայց դժբախտի յոյսը ի դերև է ելնում և յիշեալ Լևոնից իմանալով եղելութիւնը գալիս է Թաւրիզ և բողոքում է հայր Այվատեանին Տէր Մովսէսի այդ անխիղճ արարքի դէմ։

Իսկոյն Տէր Մովսէսը բերում է Թաւրիզ հայր սուրբի հրամանով։ Տէրտէրը խոստովանում է իւր յանցանքը՝ թէ փող ձեռք բերելու նպատակով միայն ինքը այդ քայլն արել է, և հայր սուրբից բանադրուում է դատապարտուում 6 ամսւայ պաշտօնանկութեան։ Ահա տխուր իրողութիւն։

Ահա մեր քահանաների մի փաւաւոր տիպը։

Ահա թէ մինչև ո՞ր աստիճանի է անում ստորութիւնը։ Եւ բաւական է որ մարդիկ յեղափոխութեան սրբազան դրօշի տակ մտած պաշտպանում են մի սրբազան դատ և դորա համար զոհում իրենց կեանքը, ստոր, ապիլատ անձինք դեռ ևս չեն վարանում խաղալ այդ զոհուող կեանքի հետ և ապ-աշկարա ուզում են չահադործել և չահագործում ու հարստահարում են ո՛չ միայն յեղափոխական սուրբ գործի համար զոհուող կեանքը, այլ և ամբողջ յեղափոխութիւնը... Ամո՛թ, բիւր ամո՛թ այդպիսիներին...։

ԹԱՒՐԻԶ Ա. Ց. ԱՍՄԱՆ

Պ. ՃԱՆԿԻԼԷԱՆԻ «ԴԻՄԱԿԱՒՈՐՆԵՐ»Ը ԵՒ ՄԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

«Դիմակաւորներ»ի պարունակութեան մասին բացատրութիւն տալու համար կազմուելիք ընկերական ատենի առթիւ, արտասահմանի մեր բարեկամներէն շատերը նամակաւ մեզ դիմելով տեղեկութիւն խնդրած են. որովհետև իւրաքանչիւրին առանձին պատասխանելը դժուար կը լինէր, պատշաճ համարեցի հրապարակաց պարզել կազմուելիք ընկերային ատենին համար իմ և վերակազմեալ Հնչ. վարչութեան միջև տեղի ունեցած բանակցութեան եղրակացութիւնը։

Սիրելի Հայրենակից

Պ. Ց. Ճանկիւլեան ի Գահիրէ

Հնչ. Յեղ. կուսակցութեան Բ.րդ պատգամաւորական հնդհ. ժողովը, չորս պատգամաւորներէ բաղկացեալ մասնախումբ մը կազմեց, պաշտօն տալով անոր, ձեզ հրաւիրելով բացատրութիւն պահանջել «Դիմակաւորներ»ի պարունակութեան մասին։

Ժողովը պիտի վերջանայ յաջիկայ շաբաթ օր. ուստի հաճեցէք հինգշաբթի կէս օրէն առաջ Աղէքսանդրիա գտնուիլ. Հաճի Տուտուի օթէլը, ժամը 12էն մինչև 1, ուր ձեզ պիտի սպասէ մասնախումբի անդամներէն Պ. Խաչատուր։

Ընդունեցէք մեր սիրալիր բարևները։

Վարչաց պատգամաւորական ընդհ. ժողովոյ.

Ատենադպիր Ատենապետ

Ղևոնդ Շահվիր Կ. Ց. Փափազեան

98 Հոկտ. 17

Աղէքսանդրիա

Գահիրէ. Հոկտ. 19. 98

Պ. Կ. Ց. Փափազեան

Աղէքսանդրիա

Սիրելի Հայրենակից

Երէկ գիշեր Պ. Դուրգէն Միրիջանեան՝ Ձեր և Ղևոնդ Շահվիր ստորագրութեամբ մի նամակ յանձնեց մեզ. նամակին մէջ հասցէնիդ չըլլալուն պատճառաւ չը կրցինք անմիջապէս պատասխանել։ Կը յուսանք թէ Ձեր հասցէն չուտով կիմացնէք մէզ. որպէսզի պատասխանենք Ձեր նամակին։

Նամակնիդ մեզ Ֆասնելուն ապ[illegible] ըլլալուն հետևանքով դարձեալ կրկնակի ապահովեալ ընել ինչպէս պիտի ընենք նաև մենք։

Ընդունեցէք սիրալիր բարևներս

Ց. Կ. Ճանկիւլեան

Հասցէ

H. G. Djangulian

CAIRE (Egypte)

* * *

Գահիրէ 19 Հոկտ. 98

Սիրելի Պարոնայք

Ց. Կ. Փափազեան և Ղևոնդ Շահվիր

Աղէքսանդրիա

Ներկայիս 17 թուակիր նամակնիդ սիրով ստացայ, այդ մասին զգացուած գոհունակութիւնս աւելի մեծ պիտի լինէր, եթէ յանուն «Հնչակ»եան Յեղ. կուսակցութեան ինձ նամակ ուղղելու մասին արգելքի մը չգոյութիւն ընդունուէր նաև, իբր անհրաժեշտ հետևանք. ձեզ ուղղուելու հաւանական զգալի եղող պատասխանիս համար հասցէ մը ցոյց տալու մասին հոգ չէ, քանի որ ձեր նամակի սկզբունքը սիրով ընդունած եմ այդ թերութիւն անուանելու չափ հոգեկան զիջող պակասութիւն մը ես կը լրացնեմ։ Ներկայ նամակիս մի ընդօրինակութիւնը Պ. Շահէնին զրկելով, որպէսզի եթէ թերէք ներկայս չըստանալու լինիք՝ զի չեմ յուսար, ըստ ինքեան կրկնակի ապահովեալ կը զրկեմ. Հաճի Տուտուի օթէլը ուր կըսէք պիտի սպասէ զիս Պ. Խաչատուր մասնաճիւղի մի անդամը, վերջապէս լինիք թէ ձեզի անմիջապէս պատասխանելու առիթը երբէք փախուցած չեմ։ Ճշտապահութիւնս աւելի վեր հանող անհերքելի փաստ մը ևս կը նկատէք անչուշտ այսօր իսկ Պ. Շահէնի միջոցաւ ձեզ — Պ. Կ. Ց. Փափազեան — զրկած նամակս։ Ձեր հասցէն իմանալու յուսով։

Արդ կ'արտօնուիմ այժմ պատասխանելու ձեր յիշեալ հրաւէրին։

Նկատելով որ 98 ապրիլ 10 թուականիը Նամակաւոր «Միութիւն» թերթի մէջ հրատարակած եմ թէ մի անգամ ընդ միշտ խզած եմ յարաբերութիւնս ամէն դասակարգի յեղափոխական կուսակցութեանց և նա մանաւանդ Հնչ. Յեղ. կուսակցութեան. մարմիններէն (*) մնալով միշտ ընդհ. հիմնական միութեան համակիր և փաքսոդ։

Նկատելով որ ի մէջ այլոց երկու մեծագոյն պատճառներով, այսինքն նախ «Դիմակաւորներ»ին մէջ Հնչակեան կուսակցութեան անդամակիցներէն մի քանիին վրայ եղած տիրողութեանց նկատմամբ յիշեալ կուսակցութիւն ինձմէ բացատրութիւն պահանջելով. երկրորդ՝ սոյն բացատրութիւն պահանջել կարողանալու համար «Դիմակաւորներ»ի հեղինակ իւր իրաւասութեան տակ գտնուող անդամակից մը ճանչնալ ուզելով, մի կողմէ դատախազ՝ իսկ միւս կողմէն դատաւորի յատկութիւններն միացնել կը ճգնի։

Նկատելով որ դատաւորի յատկութիւնը իւր գոյութեան պատճառը չոնտենալով դատախազութեան տեսակէտն ի մէջ գտնուելով, լինի նաև զարբէկեան լինի «Մարտ»եան կուսակցութեանց որ և իցէ մարմին մը իւր անդամներուն դէմ գրուած բանի մը համար բացատրութիւն պահանջելու — լաւ ևս է ըսել դատաւորութիւն ընելու — համար կազմուելի դիւանի մը մարմինը, իւր սահմանից դուրս և ոչ է կողմնակալութեան և աջակցութեան կասկածներէն հեռու եղող անձնաւորութեանց մէջ փնտռելու արդար սկզբունքը յանդգնաբար անվնասաբերի պէտքն ունի։

Նկատելով որ «Դիմակաւորներ»ի հեղինակը, իւր արդարացի ամբաստութիւն ոչ է կուսակցութեան օրգան լինելով ի լոյս հանած չէ, այլ ընդհակառակն՝ իբրև մի անկեղծ ազգային անդամ իւր դիտողութիւններն ընդհանուր ազգին նուիրած է. Ցրոմ իւր անկեղծութեան հակառակ պնդել յանգգնիմ դատախազներուն դէմ մի անդամ ևս և աւելի ընդարձակ միջոցներով ըլլալիք արդարացումը յանուն ընդհանուր ազգին դատաւորի յատկութիւնը ունեցող անխիտիր և անկողմնակալ դիւանի մը առջև պէտք է լինի։

Նկատելով թէ Հնչ. Յեղ. կուսակցութիւնը տիսկալուած դիւանի մը Աղէքսանդրիոյ մէջ նիստ ունենալ փափաքելու ատեն, «Դիմակաւորներ»ի յեղինակը հակառակ բնական և սրբական օրինաց, գտնուած միւս քաղաք հրաւիրելու համար նորա ճանապարհի ծախքն ինչպէս նաև գտաւորութեան միջոցին ընելիք ծախքերն հայթայթելու պարտականութիւն ստանձնելու պայմանին պէտք է հպատակի։

Արդ վերոյիշեալ պատճառներով ստորագրեալս իրաւացի կը համարի ընել հետեւեալ առաջարկութիւն յանուն Հնչ. Յեղ. կուսակցութեան ընդհ. պատգ. ժողովին զինք հրաւիրող պարոններուն։

(*) Սոյն վերջինը Նազարբէկեան և «Մարտ»եան երկու ճիւղերու բաժնուած ըլլալէն յետոյ բոլորովին մութի մէջ կը մնայ թէ զիս հրաւիրող պատգամաւորական ժողովը ասոնցմէ որքո՞ն կը պատկանի։

1. Դաշնակցական Յեղ. կուսակցութեան կողմէ երկու, ազգային չէզոք և պատուաւոր անհատներէն երկու, Նազարբէկեան Հնչ. Յեղ. կուսակցութեան կողմէ երկու, «Մարտ»եան Հնչ. Յեղ. կուսակցութեան կողմէ երկու, սոյն 8ի կողմէն ընտրուելի մէկը, որ ընդ ամէն 9 դատաւորներէն բաղկացած դիւանի մը ներկայութեան Գահիրէի մէջ։

2. Եթէ Աղէքսանդրիա նախաձեռնարկը համարուի, ստորագրեալին վճռելն։

Ա. Ճանապարհի ծախսը մէջն ընելով դատավարութեան առաջին ամսուան համար 4 անգղ. ոսկի։

Բ. Անկէ զատ ամբողջ ժամանակի ինքնաքանչիւր ամսոյան համար 3 անգղ. ոսկի։

3. Եթէ դրամական կողմը թրենց անախորժ թղթի ստորագրեալին կողմէն դիւանին ներկայանալու փոխանորդի մը ընդունուելու ըստ ժղրունքը։

Անհամբեր պատասխանին սպասելով մնամ սիրալիր բարևներով։

Յ. Կ. Ճանկիւլեան

(շարունակելի)

ՀԱԿԻՐՃ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Պ. Վահրամ ի Շարապոս — Եգիպտոս — DIS MOI QUI HANT? JE TE DIRAI QUI TU ES. . .

Հանրածանօթ երգիծաբանական՝ կամ աւելի լաւ է ըսել զաւեշտական հանդիսին 25րդ թուոյն մէջ կարդացինք մեր վրայի ձեր դրած դուրս դուրանը յոգում և ո՛չ մի տող իսկութիւն չտեսնելով, անկարևոր և միանգամայն անխոհեմութիւն համարեցինք պատասխանել։

Կերևի թէ՝ Եգիպտոսի ջերմաչափի աստիճանը 44 կրատի հասած ու ձեր ուղեղին ազդած է, կամ Պ. Ճանկիւլեանի կարծր գաւազանէն ձեր մարսած Ֆանր հարուածներու վրէժը մեզմէ լուծել կը փորձէք. ատոր համար չենք վեճադրեր զձեզ։

Nous connaissons assez votre caractere.

Ռ. Թ. Մ.

«ԱՆԱՀԻՏ»

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՑ

Ազգային Գրական, Դեղարուեստական

Հանրածանօթ բանաստեղծ եւ գրագէտ Տիար Արշակ Չօպանեանի խմբագրութեամբ Բարիզի մէջ սկսուած է հրատարակուիլ 1898 նոյեմբերի սկիզբէն, որուն երկու թիւերն արդէն ստացած ենք խորին շնորհակալութեամբ։ Ինչպէս ծանօթ է բոլոր հայերուս, երիտասարդ գրագէտն՝ որ ժամանակ մը ի վեր ազգային գրականութիւնը եւրապացւոց ծանօթացընելու կը նկրտէր, առ այդ իւր պպրտականութիւնը արդէն անթերի կատարած ըլլալով՝ այժմ «Անահիտ»ի հրատարակութեամբ կը ջանայ հայ հասարակութեան բարոյական եւ մտաւորական պաշարմը մատակարարել, որով ապագային պարտաճանաչ նոր երիտասարդութիւն մը պատրաստելու յոյսը կը խոստանայ մեզ։ «Անահիտ»ը արտասահմանի մէջ վերջերս հրատարակուած հանդէսներէն լուրջ և ուղղահայեաց կը տեսնուի. մաղթենք որ մնայ միշտ նոյն ուղղութեան մէջ։

Ցաջողութիւն և յարատեւութիւն մաղթելով կը յանձնարարենք մեր ազգայնոց որ իրենց նիւթական եւ բարոյական աջակցութեամբ քաջալերեն սոյն ազգօգուտ հրատարակութիւնը։

Հասցէ՝

Mr. A. Tchobanian 6 place de l'Odéon. PARIS

«ԲԱՆԱՍԷՐ»

ՀԱՆԴԷՍ ԵՌԱՄՍԵԱՑ

Պատմական և Լեզուաբանական

Սոյն հանդէսը լոյս պիտի տեսնէ Բարիզի մէջ, խմբագրութեամբ Տիար Կ. Ց. Բասմաճեանի, որ երկար տարիներ ի Կ.Պոլիս պատմական աշխատութեանց փարած ըլլալով, այժմ Բարիզի բարձր ուսումնարաններէն օգտուած և տեղւոյն պատմական-լեզուաբանական վարժարանի չրջանն աւարտած ու վկայական ստացած է համալսարանէն։

«Բանասէր»ը երեք ամիսը անդամ մը և առ այժմ վիմագրութեամբ պիտի հրատարակուի, ու միայն պատմական լեզուաբանական, հնախօսական, և բանասիրական նիւթերով պիտի զբաղի. քաղաքական, գրական և նոյնիսկ գիտական յօդուածներ չպիտի պարունակէ։ Բարիզի մեծ մատենադարանին մէջ գտնուած հայերէն ձեռագրաց մասին մանրամասն տեղեկութիւններ պիտի տայ։

Մեր պատ. բարեկամին իսրտէ յաջողութիւն մաղթելով՝ անհամբեր կը ըսպասենք «Բանասէր»ի հրատարակութեան։

Բաժանորդագրութիւնն արդէն բացուած է. ամէն տեղերու համար տարեկան 10 ֆր. փոստի ծախքը խմբագրութեան վրայ. հասցէ՝

G. H. Basmadjian Bd. Rochechoart No. 112 PARIS

ԲԱԶՄԱՎԷՊ

ԲԱԶՄԱՎԷՊՆ՝ կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը։ Կը պարունակէ ուսումնական հին նորակամ բառերու ստուգաբանութիւն, հետաքրքրական ազգային տեղեկութիւնք. նըմանապէս պատմական, ուսումնական, կենսագրական, բարոյական և իմաստասիրական յօդուածներ։

Ամեն ամիս կը հրատարակէ հռչակաւոր եւրոպական բանաստեղծներու դասական ոտանաւորաց աշխարհաբար թարգմանութիւնք կարևոր ծանօթութիւններով. մեր աշխարհի նահանգաց, գաւառաց, քաղաքաց վանաց և այլ նշանաւոր տեղեաց վրայ նկարագրութիւններ, քաղաքական տեսութիւններ ևն։

Հասցէն՝

RÉDACTION DE LA REVUE "PAZMAVEP,,

S.t Lazar VENISE (Italie)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԴԻՐԲ ԴԱՂ. ԵՒ ՀԱՑ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Ի. Հ. ՍԻՄԷՈՆԷ ԵՐԵՄԵԱՆ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացատրութիւններ կուտայ ընդհանուր գիտական և բժշկական իրաց և այլ կարևոր նիւթոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք անպակաս են։ Սոյն գործոյն բաժանորդագրութիւնը, որ է 10 ֆրանք, կը տևէ մինչև մարտ ամսոյն սկիզբն. յետոյ գինը 15 ֆրանքի կը բարձրանայ։ Մինչև ցարդ բաժանորդագրութիւնք հասած են 150ի։

Դիմել իւր հասցէին

Direction de l'Imprimerie arménienne St. LAZAR VENISE

Ժ.Դ. ՏԱՐԻ

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

ՌՈՒՍԱՒՆԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը։

Հայ – Գրական յօդուածներէն զատ՝ ճշդիւ տեղեկութիւն կը տրուի հայ – գրականութեան, պատմութեան և այլն նկատմամբ ամէն ամիս եղած հրատարակութեանց վրայ։ Նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ արտուած կարևոր լրերու մէջ։

«Ազգային լրագրած բովանդակութիւն»։ Թղթակցութիւն, ծանուցում, և այլն։

Խմբագրութեան ղրկուած ամէն գրքերու վրայ՝ քննադատական համառօտ տեղեկութիւն տալը պիտի շարունակուի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ

A la Rédaction de la Revue „Hantesse", Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ՕՐԱՑՈՑՑ

1899 Տարուան

Լոյս տեսաւ Տէր Ղևոնդ քահանայ Փափազեանի Հայերէն-Ռումաներէն օրացոյցը ճոխ պարունակութեամբ, պատկերազարդ և ընտիր թղթով տպագրուած։

Գինն է՝ թղթակազմին 1 ֆր. լաթակազմին 1½ ոսկեզօծին 2։ Դիմել հեղինակի հետևեալ հասցէին՝

R. P. Leon Papazian Eglise Arménienne. Galatz (Roumanie)

Լոյս տեսաւ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Գունաւոր և մեծադիր. գինն է 2 ֆր. փոստի ծախքով։ Դիմել խմբագրութեան կամ արտասահմանի մեր պ. պ. գործակատարներուն։ Ամերիկաբնակ ազգայինք կրնան դիմել ուղղակի հետևեալ հասցէին՝

Mr. Dades Zakar a Serew et Co. Providence. U. S. A.

«ԻՐԱՒՈՒՆՔ»

Նոր տարիէն սկսեալ ծաւալն ընդարձակեց, կէսը հայերէն և կէսը պուլկարերէն կը հրատարակուի իր հին ուղղութեամբ։ Տարեկան բաժնեգինը 12 փնցամեայ 6 ֆր. հասցէ՝

Redaction du journal «Iravounk»
Varna Boulgarie

«ՄԻՈՒԹԻՒՆ»Ի ՄԻՋՈՑԱՒ ՓՆՏՌՈՒԱԾ ՀԱՍՑԷՆԵՐ

Գտնուած է Շապին-Գարահիսարցի Գալուստ Գալիօնճեան՝ Զմիւռնիայէն Աղէքսանդրիա փոխադրուած է՝ հասցէն.

K. Kaliondjian Eglise Armenienne Alexandrie (Egypte).

Գտնուած է Թաթէոս Տոստուրեանը. հասցէն՝

Stephan Agopian Courabia (Roumanie).

Կը փնտռուի Բաղէշի Կիւզէլ-Տէրէ Տօք գիւղացի Աբրահամ Մարտիրոսեան 35 տարեկան, հասցէն տալ խմբագրութեանս։

1898 Յունուար — Եւլիս ի մէջ Տիվրիկի Խռնաւուլ գիւղէն Մինաս Քօչեան 28 տարեկան միջահասակ, չիկադէմ, սակաւապեխ, նախկին Հնչակեան երիտասարդը՝ որ ի Կ. Պոլիս Անտօն Ազարեանի տունը կը կը ծառայէր. կը տարածայնուի թէ Պաթումի կողմերը սպաննուած է, որու մասին իւր ընտանիքը մի որոշ տեղեկութիւն չունենալուն համար, կը խնդրէ ազգայիններէն որ այդ անձի վրայ ունեցած տեղեկութիւններին հաճին «Միութիւն»ի խմբագրութեան հաղորդել։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

C'est avec plaisir que nous avons reçu la commande de Mr. Le Consul Général d'Italie en Florence.

Մատիսօն— պ. Գ. 2 տօլար Ձեր բաժանորդագինը ստացանք, առաջարկնիդ կը կատարուի։

Պրայիլա— Ընթերցասիրաց ընկ. և Տէր Ստեփան քհնյ. յաջողութիւն և յարատեւութիւն կը մաղթեմ, Ձեր գրածը յաջորդ թուով։

Կալկաթա—պ. Արծրունի. նամակդ և դարթդ ստացանք, նոր հասցէիդ կը սպասենք։

Մոսկուա— Բափու Տփղիս. պ. Կրակոտ, Ձեր կրկնակի գրութիւնները անհրատարակելի միայն թերթիս գաղարման համար, ներողութիւն։

Տփղիս— պ. Թ. Ցարդ Ձեր ղրկած պրօշիւրներն ու բոլոր գրութիւնները ստացուած են բացի երկու բուպլիէն և «Սանթօ»էն։

Թ. Սէվէրին (Ռումանիա), նամակդ ստացանք, թերթերը պիտի ըստանաք չարունակաբար։

Լոնտոն— պ. Մ. Ս. Ձեր ըրած ջանքերուն համար շնորհակալութիւն։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Ամերիկեան ծերակոյտի ժողովը 27 քուէի դէմ 57 քուէով վաւերացուց Սպանո-Ամերիկեան պատերազմի խաղաղութեան վերջնական պայմանները։

— Պերլինի մէջ առաջիկայ Մայիսի 24ին միջազգային ժողով մը տեղի պիտի ունենայ Թոքախտի համաճարակ ախտին առաջքը առնելու համար։

— Յունաստանի Բէլօբօնիսօս նահանգին մէջ երկրաշարժի ցնցումէն շատ մը գիւղեր և գիւղաքաղաքներ վնասուած են։

— Գերմանացի նշանաւոր աստղագէտ մը իւր իմաստասիրութիւններէն կը հետեւցնէ թէ տարւոյս Նոյեմբեր 13ի գիշերը ժամը երեքը քառորդ անցած ամբողջ աշխարհ պիտի կործանի։

— Կ. Պոլսոյ մէջ Ալպանացիներու յուզումը կը շարունակուի, նշանաւոր Ալպանացիներ մարդակեր Համիտը մահուան դատապարտած ըլլալով բաղանութեան փորձ մը ըրեր են, վեցհարուածեան հրացէն պարպելով, սակայն փորձը դժբաղդաբար անյաջող, և այդ առթիւ երկու Ալպանացիներ ձերբակալուած են։

— Մակեդոնական հրատապ խնդրոյ առթիւ, Բ. Դուռը քաղաքական նոր միքենայութիւններ Եւրոպական պետութիւնները խաբելու համար Սելանիկի կառավարիչ Րիզա Փաշան հեռագրով Պոլիս հրաւիրած է։

— Յունաստանի մէջ երեսփոխանական ընտրողութեան պայքարը բուռն, քաղաքական շարժումներէն կը հետեւցունենք թէ ի մօտոյ կառավարութեան վարչական ղեկը դարձեալ պ. Թէոդորոս Տէլիեանիի։

— Վիէննայէն յունուար 17 Թուականաւ կը հեռագրեն թէ՝ Ալպանացի Թուրքերն ու քրիստոնեաներն առանց կրօնի խտրութեան Իբէկի մէջ խառն ժողով մը պիտի գումարեն, յորում երկրին ներքին անորոշ դրութեան վրայ մանրամասն բողոքագիր մը պատրաստելով պիտի ներկայացնեն Համիտին։

— Ամերիկեան զօրքերու և Ֆիլիպպինցի յեղափոխականներու մէջև Մանելայի մօտ սարսափելի ընդհարում մը պատահելով, 15 ժամ տեւած է, յորում հազարաւոր զոհեր տուած են յեղափոխականները։ Ամերիկեան նաւատորմիղը երկու գիւղեր խորտակած է ռմբաձգութեամբ։

— Ս. Բեթերպուրկի «Վէդօմօստի» լրագիրը կը հաստատէ թէ՝ Ղուլիէլմօս» Կայսրը Զարին ինքնագիր նամակ մը գրկելով խոստացած է ընդհ. զինաթափութեան խնդրոյ առթիւ ի Քօփէնհակ գումարելի դեսպանական ժողովին մասնակցելու համար ղրկել իւր փոխանորդը։

— Կոմս Մուրավիէֆ Ս. Փեթերպուրկի Օսմ. Դեսպան Հիւսնի պէյին հետ տեսակցած պահուն յայտարարած է թէ՝ Ռուսիա ոյժ չպիտի տայ Մակեդոնական շարժմանց։ Կոմսի այս խոստովանութիւնը լաւ տպաւորութիւն թողած է Եըլտըզի դիւանագիտական շրջանակին մէջ։

— Թիւրք կառավարութիւնը Թուրք և պուլկարական սահմանները ամրացնելէն յետոյ կը կարծէ գտնալ թէ Մակեդոնիոյ ապստամբութեան առաջքը առած է, եթէ Թուրքիոյ թըշնամի կառավարութեանց կողմէ ոյժ չտրուի ապստամբներուն։

— Կրետացի Թիւրքերը Սելանիկ գաղթող իրենց ազգակիցներուն նամակներ գրելով Հերակլիոնի թղթատարին յանձնած պահուն՝ տեղական իշխանութիւնը նամակները գրաւելով թարգմանել տուած է, որոնց մէջ զարմանօք տեսեր է հետեւեալ հետաքրքրաշարժ տողերը՝

«Սիրելի ազգակիցնե՛ր. — Կեաւուրներու բռնութեան լուծին տակ ինկանք, եէզիտներու մեզ ազգած սարսափը աննկարագրելի է, փախերնուս կեաւուռի մը էօլլէւշիւն քէօրիւ ըսելու կը վարանինք. Ալլահը վերջերնիս բարին կատարէ։ Նայեցէք որ հոտ բնակող կեավուռներէն մեր վրէժը լուծէք»։

Այս նամակներու հեղինակները ձերբակալուելով բանտը նետուած են, ուր կը միան ցայս վայր։

— Կրետէի սահմանադրութեան օրէնքները արդէն խմբագրուած և այս օրերս Եօրկիոս իշխանի կողմէ կը ներկայացուին Եւրոպական պետութեանց փոխանորդներուն։ Նշանակութեանց արժանի կէտերը հետեւեալներն են, զորս կը քաղենք հաւաստի աղբիւրներէ։

Երեսփոխաններն ընդ ամէնը 50 պիտի ըլլան, որոնցմէ տասը իշխանը՝ ինք պիտի ընտրէ. իսկ մնացեալ քառասունն որ առաջնակարգ դասին պիտի պատկանին, ժողովրդի գաղտնի քուէով պիտի ընտրուին։

Նախարարները՝ «Կրետէի քաղաքական վարչութեան անդամ» տիտղոսը պիտի կրեն և պիտի բաղկանան 5 անձերէ, որոնց մէկն Թուրք։

Իշխանը իրաւունք պիտի ունենայ ամեն պարագայի մէջ ընտրել կամ պաշտօնանկ ընել այն անդամներն, որոնք այդ կոչման անարժան կը գտուին ինչ ինչ պատճառներով։

— Լօնտոնէն կը հեռագրեն՝ Լօրտերու ժողովին մէջ պ, Վինէրման յայտարարեց թէ՝ Անգլիոյ և Գաղղիոյ միջև եղած առկախ խնդիրները բարեկամութեամբ պիտի կարգադրուին։

— Գանտիաէն կը հեռագրեն Լօնտոնի թերթերուն, իբր թէ՝ Եօրկիոս իշխանի կեանքին դէմ դաւադրութիւն մը պատրաստուած է Կրետացի Թուրքերու կողմէ՝ և պիտի գործադրուի երբ իշխանը Հերակլիոնն այցելէ։

— Վիէննայէն կը գրեն թէ՝ «Բէշթական Լօյտ» լրագիրը վերջերս հրատարակած է Աւստրիական կառավարութեան հետեւեալ կէս պաշտօնական յայտարարութիւնը։

— «Մակէդոնիաէն մեզ հաղորդուած պաշտօնական այն լուրերը որ անհանդարտեցուցիչ կերպարանք մը կուտան խնդրոյն, որպէս թէ գարնան եղանակին մակեդոնական խնդիրը զգալու պէս պիտի յուզուի Եւրոպական դաշնիճներու առջև և բոլորովին կարեւորութենէ զուրկ է։

Մակեդոնիոյ մէջ ո՛և է ապստամբութիւն կամ մի փոքրիկ շարժում անկարելի է. հակառակ պարագային ապստամբութիւնը իւր ծնած օրէն պիտի խեղդուի, քանի որ Աւստրիա և Ռուսիա գոնէ այդ խնդրոյ մէջ համաձայն և հպմերաշխ գործակիցներ են»։

ԱԶԴ

Կը ծանուցանեմ Պատ. Ազգայնոց որ բազմաթիւ խնդրանաց գոհացում տալու փափաքով՝ հետեւեալ մեծադիր (21—27) լուսանկար պատկերներն պատրաստած եմ յատուկ խնամքով և իսկական նմանութիւնով, որոնք ընտիր քարդօնի (33—39) վրայ փակցուած կը ծախուին հատը՝ ֆր. 2,50ի՝ ամեն տեղի համար և փոստի ծախքով միասին։

Ազգային հաստատութիւններու եւ մեծաքանակ գնողներու համար գոհացուցիչ զեղչ։

Վճարմանք կանխիկ

1. Նշանակք Հայաստանեայց
2. Խրիմեան Հայրիկ
3. Իզմիրլեան Պատրիարք
4. Ներսէս Պատրիարք
5. Րաֆֆի
6. Քամառ Քաթիպայ
7. Գ. Արծրունի

Դիմել՝ K. Deukmédjian
Roustchouk
(Bulgarie)

Մ. ՍԱՊԱՀ - ԳԻՒԼԵԱՆ

ՍԻՐՈՊՍՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

96 երեսէ բաղկացեալ կարդալու արժանի ընտիր գործ մ'է գինն է 1 ֆր. դիմել՝ հեղինակի հասցէին ի Ռուսչուք, և «Շարժում»ի խմբագրութեան ի Վառնա։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

«ՆՈՒԱԳՆԵՐ»
Ա ԱՍՄԱՆԻ

Գինն է 10 կոպէկ։ Եւրոպայի համար — 25 — սանթիմ. գումարով գնողներին 10 օ/օ զեղչ կը լինի։

Դիմել՝ «Միութիւն»ի խմբագրութեան և հեղինակի հետեւեալ հասցէին։

A. ASMAN. Maragha-Perse.
Poste Restante.

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա. Յ. ԱՍՄԱՆԻ

I «ՀԱՅԴՈՒԵԿ»

պօէմա

II «ՎԱՃԻ»

ժամանակակից վէպը

Երկուսի նիւթն էլ առնուած է Վասպուրականի վերջին դէպքերից և իւրաքանչիւրը բաղկացած է 32 երեսներից։

Դրանց տպագրութեան ծախքը հոգալ կամեցողները թո՛ղ բարեհաճին իրենց պայմանները գրել հեղինակին հետեւեալ հասցէով.

A. H ASMAN Poste Restante
TAURIS — PERSE

«Միութիւն»ի երեք թիւերը ըստանալէն յետոյ չի վերադարձնողները պէտք է իրենց բաժնեգինը ղրկեն, հակառակ պարագային իրենց թերթը դադրեցնելով լրագրոյս միջոցաւ հին հաշիւնին պիտի պահանջուի խմբագրութեանս կողմանէ։

ԽՄԲԱԳ. «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի
ԱԹԷՆՔ ՀԱՅԿ. ԱԶԳԱՅ ՏՊԱՐԱՆ